

նել տնակներ՝ ուր հազիւ կարելի է պատասպարուիլ միջնուորտի խօսուածիւններէն, հաստատուած է որ իւրաքանչիւրին համար պէտք էր ծախսել նուազագոյն 25 ոսկի: Արդ, բացայայտ է որ յարաբերօրէն ճիշտ թիւ մը ունենալու համար պէտք է ընդունիլ 50 ոսկիի նուազագոյն և 500 ոսկիի առաւելագոյն չափ մը՝ իւրաքանչիւր այրած շէնքի համար, ինչ որ ցոյց պիտի տար պաշտօնական գնահատումներու իսկական արժէքը:

Հաւատարմապէս օգտակար է յիշել որ Ատանայի մէջ ապահովագրական ընկերութեանց հասուցանելի վնասներու գումարը կը հասնի 750,000 ոսկիի: Աւելորդ փաստ մը ևս՝ պաշտօնական թիւերու արժէքը յոյց տուող է:

Հարկադրուած եւ կղրակացնել որ նիւթական կորուստներու ընդհանուր գումարը, անշարժ և շարժուն կալուածներով, 3 միլիոն օսմ. ոսկիէն յաւկաս պէտք չէ ըլլայ:

Բ.

ԽՈՒՎՈՒՔԵԱՆԸ ԱՎԱՏՆԱՐԱՆԵՐԸ. — Ինչպէ՞ս սկսան  
և իրենց ընթացքը փարունակեցին

Պոլսոյ մէջ Մարտ 31ի հակալեզափոխական շարժումը սկսելուն հետ միասին, միեւնոյն օրուան ցորեկէն վերջ, անմիջապէս որ հեռագիրը արձագանգը տուաւ այն դէպքերուն՝ որոնց մայրաքաղաքը թաար հանդիսացած էր, Ատանայի մէջ խռովութիւնները պայթեցան:

Յաջորդ օրը, չորեքշաբթի, այս խռովութիւնները կը փոխուէին ջարդերու՝ որոնք տեւեցին երեք օր և վերջացան Ապրիլ 3ին:

Յետոյ, Րումէլիէն եկած վաշտերուն հասած իրի-